

Ներածություն

Համաձայն գործող միջազգային մեթոդաբանության* և «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) գյուղատնտեսական համատարած հաշվառումն (այսուհետ՝ ԳՀՀ) իրենից ներկայացնում է գյուղատնտեսության կառուցվածքի վերաբերյալ համընդգրկուն տվյալների հավաքագրման, մշակման և տարածման վիճակագրական գործառույթ:

Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ անցկացվել է 2014 թվականի հոկտեմբերի 11-31-ը ներառյալ: Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ անցկացվել է առաջին անգամ և համաձայն Օրենքի այն պետք է իրականացվի տասը տարին մեկ:

ԳՀՀ մեթոդաբանական, կազմակերպական սկզբունքները, նյութերի մեքենայական մշակման ծրագրերն ու գործընթացները փորձարկելու նպատակով, 2013 թվականի նոյեմբերի 10-30-ը ներառյալ անցկացվել է փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում:

ԳՀՀ նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների պատասխանատուն վիճակագրության պետական լիազորված մարմինն է՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ):

Ըստ Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պահանջի, ԳՀՀ նախապատրաստման և անցկացման աշխատանքներին օժանդակելու նպատակով ՀՀ կառավարության 25.04.2013 թվականի թիվ 402-Ն որոշման համաձայն ստեղծվել են ՀՀ 2014 թվականի ԳՀՀ նախապատրաստման և անցկացման համապետական, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ ՀՀ ՎՊԽ) 2013 թվականի մայիսի 3-ի թիվ 02-Ն որոշմամբ 2013 թվականի մայիս ամսից ստեղծվել է ԳՀՀ գործառնական ստորաբաժանում՝ վարչության կարգավիճակով:

Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ անցկացման նպատակներն են՝

- 1) գյուղատնտեսության կառուցվածքի՝ գյուղատնտեսական նշանակության հողեր, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակ, գյուղատնտեսական տեխնիկա, գյուղատնտեսական նշանակության շինություններ, առկա ներուժի՝ մարդկային, նյութական և դրա օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը՝ հանրապետության, մարզային և համայնքային կտրվածքով,*

*) Статистические разработки ФАО, Серия 11, Система интегрированных сельскохозяйственных переписей и обследований, том 1, <<Программа Всемирной сельскохозяйственной переписи 2010 года>>, Продовольственная и Сельскохозяйственная Организация Объединенных Наций, Рим 2005, 198 стр.

*) FAO statistical development series 11, A system of integrated agricultural censuses and surveys, volume 1, <<World Programme for the Census of Agriculture 2010>> Food and Agriculture Organization of the United Nations Rome, 2005, 160 pages.

- 2) *գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների հաշվառման ամբողջական համակարգի ձևավորումը,*
- 3) *գյուղացիական տնտեսությունների վիճակագրական ռեգիստրի ձևավորումը,*
- 4) *միջազգային վիճակագրական տվյալների հետ համադրելիության ապահովումը:*

Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ անցկացումը կարևորվել է նաև այն տեսանկյունից, որ վերջինիս իրականացման արդյունքում հավաքագրված վիճակագրական տվյալները կօգտագործվեն դիտագննումային (մոնիթորինգային) ցուցանիշների համակարգերի ձևավորման համար՝ *աղքատության դիտագննում, պարենային անվտանգության դիտագննում, գյուղատնտեսության ծրագրավորում և այդ ոլորտում քաղաքականության մշակում, ըստ սեռային բաժանման վիճակագրության վարում, ընթացիկ վիճակագրության որակի բարելավում, սպառողներին առավել ընդգրկուն տեղեկատվության տրամադրում և այլն:*

ԳՀՀ-ով հավաքագրված վիճակագրական տվյալները հնարավորություն կընձեռեն՝ *բարելավել գյուղատնտեսության ոլորտի ընթացիկ վիճակագրությունը, ձևավորել գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների ամբողջական համակարգ, ձևավորել գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների վիճակագրական ռեգիստրներ, կատարելագործել վիճակագրության ընտրանքային գործիքները և ապահովել դրանց համապատասխանությունը գործող միջազգային չափանիշներին և չափորոշիչներին, բացահայտել գյուղատնտեսության ենթակառուցվածքների փոփոխությունների միտումները, հստակեցնել գյուղատնտեսության, որպես ձեռնարկատիրության (տնտեսական գործունեության տեսակի) առավել մանրամասն կազմն ու կառուցվածքը:*

ԳՀՀ անց է կացվել Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ բոլոր համայնքներում:

Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ կազմակերպման և անցկացման մեթոդաբանությունը, ինչպես նաև ԳՀՀ հարցաշարը և դրա հիման վրա կազմված հարցաթերթերը մշակվել են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ուղեցույցերի համաձայն, Ամերիկայի միացյալ նահանգների գյուղդեպարտամենտի փորձագետ Մայքլ Սթայների, Եվրոպական Միության «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ներքո ԵՄ ԹՎինինգ ծրագրի մշտական խորհրդատու Թոմաս Բիլի, Շվեդիայի վիճակագրական ծառայության գլխավոր խորհրդատու Ռոլֆ Սելանդերի, Դանիայի վիճակագրական ծառայության գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Քրիստիան Հյուլսագերի, Դանիայի վիճակագրական ծառայության գյուղատնտեսության վիճակագրության ենթաբաժնի պետ Քարսթեն Լարսենի, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության վիճակագրության բաժնի տնօրեն Պիետրո Ջենարիի, գլխադասային գրասենյակի հաշվառման վիճակագիր Գեորգի Կվինիկաձեի, փորձագետներ Օլեգ Կարայի և Վասիլե Պետրեի, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակիցների աջակցությամբ:

Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ միավորները հանդիսացել են՝ *անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունները, գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքաբնակների անհատական տնտեսությունները, այգեգործական ընկերակցությունների*

անդամների անհատական տնտեսությունները, համայնքները, գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, խմբային տնտեսությունները:

Տվյալների հավաքագրումն իրականացվել է համատարած և ընտրանքային եղանակներով:

ԳՀՀ կազմակերպման և իրականացման հետ առնչվող բոլոր մեթոդաբանական և կազմակերպչական փաստաթղթերը տեղակայված են ՀՀ ԱՎԾ կայք էջում՝ <http://www.armstat.am> : <http://armstat.am/am/?nid=455>